ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» 10 2014 թվական N 104 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 7 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի>> 4-րդ կետի դրույթներով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Սամվել Մինասյանի փոխարեն ընդգրկել Զորիկ Խաչատրյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 122 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 7 կարգադրության հավելվածում <<ՍԱՄՎԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին/մարզային հողային պետական տեսչության/ պետ, անդամ>> բառերը փոխարինել <<ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ, հանձնաժողովի անդամ>> բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է